

ԿԱՐԾԻՔ

Զարուհի Վարդանի Հարությունյանի «Էրգոթերապևտիկ միջամտության մոդելավորումը ներառական կրթություն իրականացնող դպրոցներում» թեմայով՝ ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» (Հատուկ մանկավարժություն) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հրապարակային պաշտպանության ներկայացվող ատենախոսական աշխատանքը նվիրված է հատուկ մանկավարժության արդի խնդիրներից մեկին, այն է՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների կրթական կարիքների գնահատմանը և էրգոթերապևտիկ միջամտության արդյունավետ մեթոդների ներդրմանը ներառական կրթական համակարգում:

Այսօր, մեր երկրում ընթացող բարեփոխումների համատեքստում, քննարկվող խնդրի արդիականությունը կասկածներ չի առաջացնում, քանի որ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ամբողջ աշխարհում ներառական կրթության իրականացումը հանդիսանում է գերակա խնդիր, իսկ կրթական կարիքների գնահատումը, հայտնաբերումը և համակարգումը, ինչպես նաև ԿԱՊԿՈՒ երեխաների լիարժեք ներգրավումը կրթական գործընթաց կարևոր նշանակություն ունի վերջիններիս ակադեմիական գիտելիքներ ստանալու, սոցիալականացման, հավասար իրավունքների և հասարակության լիարժեք անդամ հանդիսանալու գործընթացում: Նշենք նաև, որ կրթական գործընթացում իրականացվող աջակցությունն ենթադրում է սովորողների առանձնահատկությունների և խնդիրների գնահատմամբ հիմնավորված՝ կրթական կարիքներին համահունչ և անհրաժեշտ աջակցության ապահովում, ինչն էլ պահանջում է հատուկ գիտելիքների, հմտությունների կիրառում:

Անդրադառնալով «Էրգոթերապիա» մասնագիտությանը, որն ուղղված է բարելավելու ֆիզիկական, հոգեկան և մտավոր խնդիրներ ունեցող անձանց՝ կենսական, առօրյա գործողությունների կատարումը, ինչպես նաև՝ կանխարգելելու հիվանդությունների զարգացումը, խթանելու հարմարողականությունը կյանքի փոփոխություններին, կարևոր է նշել վերջինիս հրատապ և լայնածավալ ներդրումը

ինչպես կրթական, այնպես էլ սոցիալական վերականգնման գործընթացներում: Մասնագիտությունը կոչված է կազմակերպելու վերականգնողական միջոցառումներ, որոնք օգնում են մարդկանց լինել առավել անկախ իրենց աշխատանքում, ժամանցում և հանգստում: Էրգոթերապիստի մասնագիտական գործունեությունն ապահովում է առօրյա գործողություններում անձանց առավելագույնս անկախ և ինքնուրույն մասնակցությունը: Այս համատեքստում հատուկ ուշադրություն է դարձվում էրգոթերապևտիկ ծառայությունների մատուցման անհրաժեշտությանը, միջավայրային հատուկ պայմանների և պարագաների հարմարեցման գործընթացի կազմակերպմանը: Այս տեսակետից ատենախոսության կարևորությունը անգնահատելի ոլորտին առնչվող հայկական գիտական մտքի զարգացման հարցում:

Երեխաների հետ աշխատանքում էրգոթերապիստները, հաճախ, խաղը կիրառում են որպես միջոց՝ հիմքում դնելով զգայական ինտեգրման, նյարդագարգացնող, կենսամեխանիկական և աշխատանքային այլ կառուցվածքներ: Յուրաքանչյուրի հետ աշխատանքը պահանջում է անհատական մոտեցում՝ ելնելով սովյալ անձի կարիքներից և զբաղվածության հիմնախնդրից, որոնց բացահայտմանը նախորդում է մասնագիտական գնահատման գործընթացը: Թերապիան բավականին մեծ ազդեցություն է ունենում յուրաքանչյուր երեխայի համար՝ նրանց դարձնելով առավելագույնս ազատ՝ ինքնախնամքի, ուսուցման և ժամանցի ոլորտներում: Այս առումով, մասնագիտության դերը շատ մեծ է և կարևոր՝ ներառական կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների համատեքստում: Հիմք ընդունելով վերոնշյալ վերլուծությունը, ինչպես նաև՝ ՀՀ կառավարության նիստի 18.02.2016 արձանագրային թիվ 6 որոշումը, որը վերաբերվում է համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանին և ժամանակացույցին հավանություն տալու մասին իրավական փաստաթղթի ընդունմանը, որպես պարտադիր պայման, յուրաքանչյուր ներառական կրթություն իրականացնող դպրոցում կարող է ամրագրվել էրգոթերապիստի հաստիքի առկայությունը: Այդուհանդերձ, բոլոր սովորողների տարաբնույթ կրթական կարիքներին արձագանքելու և կրթական գործընթաց ներառելու համար մասնագիտական միջամտությունը պահանջում է ներառական կրթության սկզբունքների և գաղափարախոսության հստակեցում և յուրաքանչյուր հասարակության

մշակութային արժեհամակարգի պահանջներին համահունչ ներառական կրթության ներդրում՝ նպաստելու կրթահամակարգի բարեփոխմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցողների ինտեգրումը հասարակություն:

Այսօր արդեն ՀՀ-ում ներառական կրթությունը, հանդիսանալով կրթության քաղաքականության զարգացման կարևորագույն ուղղվածություն, նպատակ է հետապնդում ընդլայնելու և զարգացնելու կրթության քաղաքականությունն ու փիլիսոփայությունը՝ ԿԱՊԿՈՒ սովորողների կրթական կարիքների գնահատման, պլանավորման, վերահսկման և անհրաժեշտ հոգեբանամանկավարժական և վերականգնողական միջամտությունն իրականացնելու միջոցով, սակայն չպետք է անտեսել նաև որ առկա են ռեսուրսների սղության և նեղ մասնագետների խնդիրներ, ինչպես նաև՝ ֆիզիկական և սոցիալական միջավայրերի բազում խոչընդոտներ, որոնք սահմանափակում են բնականոն ներառումը և լուրջ արգելքներ են ստեղծում ինչպես երեխաների, նրանց ծնողների, բազմամասնագիտական թիմի անդամների, մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետների, այնպես էլ՝ ողջ հասարակության համար: Խնդրի ոչ բավարար տեսական և գործնական մշակվածությունը զգալիորեն բարդացնում է ԿԱՊԿՈՒ երեխաներին ցուցաբերվող էրգոթերապևտիկ միջամտությունը: Այդ իսկ պատճառով, այս երեխաներին ցուցաբերվող վերականգնողական, զարգացնող աշխատանքների միջոցների, մեթոդների և հատուկ մոտեցումների ընտրությունը և փորձարարական հիմնավորումը, նրանց գործնական հմտությունների և ունակությունների ձևավորումը, ինչպես նաև ուսուցիչների, ծնողների և բազմամասնագիտական թիմի անդամների իրազեկումը էրգոթերապևտիկ միջամտության վերաբերյալ, տեսական, գործնական և սոցիալական տեսանկյուններից հանդիսանում է բավականին արդիական և արժեքավոր:

Վերոնշյալ դրույթները թույլ են տալիս սահմանել Ջ. Վ. Հարությունյանի ատենախոսության կառուցվածքը և բովանդակային ուղղվածությունը:

Կարևոր է նշել, որ հեղինակը բավականին գրագետ, պատշաճ զիտական մակարդակի վրա սահմանել է հետազոտության օբյեկտը, առարկան, վարկածը, նպատակը, խնդիրները և պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Հետազոտության առջև դրված խնդիրների լուծման համար հեղինակը հիմնվել էր գոթերապիայի մեջ հատուկ տեղ գտած կարևոր գիտական սկզբունքների, դրույթների և տեսությունների վրա՝ մեջբերելով մասնագիտության մեջ այնպիսի փայլուն գիտնականների հղումներ, ինչպիսիք են Ջ. Քեյս-Սմիթը, Լ. Ֆինլեյը, Գ. Քիելիեֆները, Կ. Ս. Սպենսերը, Մ. Լոուն, Ա. Թուրքեթը, Վ. Կոստները և ուրիշները: Այս ամենը բնորոշում է նրան որպես ոլորտի քաջատեղյակ մասնագետ և կայացած գիտական աշխատող:

Հետազոտության տեսական նշանակությունը որոշվում է ներառական կրթություն իրականացնող դպրոցներում սովորող երեխաների համար ստվա միջավայրային անհրաժեշտ պայմանների և դասավանդման մեթոդների համապատասխանության տեսական հիմնավորմամբ, ինչպես նաև՝ հետազոտության արդյունքներով:

Հետազոտության գործնական նշանակությունը ներառական կրթություն իրականացնող դպրոցներում սովորող ԿԱՊԿՈՒ երեխաների կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացմանն ուղղված՝ տեղաշարժման, մանր մոտորիկայի հմտությունների, տարածության մեջ կողմնորոշման, հատուկ հարմարեցված գրենական պարագաների կիրառման և էրգոթերապևտիկ ուղղվածությամբ խաղերի կազմակերպման և անցկացման միջոցներով առաջարկվող մոտեցումների և էրգոթերապևտիկ միջամտության մեթոդների և պայմանների գործնական մշակումն ու դրանց ներդրումն է մանկավարժական գործընթացում՝ էրգոթերապևտիկ ծրագրի միջոցով:

Հետազոտության արդյունքները հիմք կհանդիսանան այս երեխաների հետ աշխատող ուսուցիչների, ծնողների, բազմամասնագիտական թիմի անդամների, մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետների աշխատանքային գործունեության վերակազմավորման և մեթոդական այլ մոտեցումների որդեգրման համար:

Այսպիսով, Ջ. Վ. Հարությունյանի կողմից իրականացված հետազոտության արդյունքները վկայում են նրա մասին, որ ներառական կրթություն իրականացնող դպրոցներում հատուկ ուշադրության է պետք արժանացնել էրգոթերապևտիկ միջամտության ձևերի և մեթոդների ընտրությանը, որոնք կնպաստեն ԿԱՊԿՈՒ

երեխաների լիարժեք ներառմանը ուսուցման գործընթաց և հետագայում կապահովեն վերջիններիս սահուն մուտքը համայնքային կյանք:

2. Վ. Հարությունյանի աշխատանքի առավել կարևոր ձեռքբերում ենք համարում հետևյալը.

1. Առաջին անգամ հանրապետությունում փորձ է արվել ուսումնասիրել աշխատանքների դրվածքը ներառական կրթություն իրականացնող հաստատություններում՝ էրգոթերապևտիկ միջամտության կազմակերպման և իրականացման տեսանկյունից: Հայցորդը որոշել է չլուծված խնդիրների շրջանակը և ուրվագծել նրանց լուծման ուղիները, ինչն ամբողջովին համահունչ է ներառական կրթության ոլորտի հետ առնչվող պետական ծրագրերի տեսլականի հետ:
2. Ատենախոսը պարզել է այս երեխաների հետ աշխատող մասնագետների վերաբերմունքը հետազոտվող խնդրին, նրանց տեսական գիտելիքների և գործնական հմտությունների մակարդակը ներառական կրթություն իրականացնող հաստատություններում ցուցաբերվող էրգոթերապևտիկ միջամտության հարցում:
3. Նրա կողմից հստակեցվել է ներառական կրթություն իրականացնող հաստատություններում էրգոթերապևտիկ համալիր մոտեցումների և յուրահատուկ մոդելի կիրառման նպատակաուղղվածությունը, որը կոչված է աջակցելու ԿԱՊԿՈՒ երեխաներին ոչ միայն դասարաններում, այլ ամբողջ դպրոցական միջավայրում բոլոր ուղղություններով իրականացվող կրթական գործընթացի համահունչ կազմակերպման գործում: Հայցորդը որոշել է այս աշխատանքի կատարելագործման ուղղությունները ներառական կրթություն իրականացնող հաստատություններում:
4. Հեղինակը մշակել է տեսական մոտեցումներ, օրինակելի ծրագիր և ԿԱՊԿՈՒ երեխաներին ցուցաբերվող էրգոթերապևտիկ միջամտության մեթոդներ և գիտափորձի միջոցով հիմնավորել է դրանց արդյունավետությունը: Այս նյութը ներկայացված է ատենախոսության 7 հավելվածներում:

5. Առանձնահատուկ նվաճում և ձեռք բերում ենք համարում ՀՀ-ում էրգոթերապիայի ոլորտում առաջին հայալեզու ձեռնարկի թողարկումը՝ «Էրգոթերապևտիկ միջամտությունը ներառական կրթության համակարգում»: Սա ոչ միայն նվաճում է ատենախոսության և հայցորդի կողմից կատարված գիտահետազոտական աշխատանքի շրջանակում, այլև մեր երկրում մասնագիտության զարգացման և կայացման տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ բարձր և դրական գնահատելով Ջ. Վ. Հարությունյանի պաշտպանությանը ներկայացված ատենախոսական աշխատանքը, հարկ ենք համարում նշել առկա առանձին բացթողումները.

1. Աշխատանքի առաջին գլխում հեղինակը բազմաթիվ անգամ նշում է ԿԱՊԿՈՒ երեխաների կրթական գործընթացի և սոցիալական հարմարման զարգացման կարևորության մասին, ինչին և ուղված է սույն աշխատությունը: Սակայն աշխատության մեջ նաև կարևորագույն շեշտ է դրվում ԿԱՊԿՈՒ երեխաների ֆիզիկական հարմարման և ֆիզիկական միջավայրի ձևափոխման և հարմարեցման կարևորության վրա: Խոսելով միայն սոցիալական հարմարման զարգացման մասին, հեղինակը ավելի է նեղացնում իր իսկ կողմից կատարված հսկայական աշխատանքը, այդ իսկ պատճառով կարծում ենք, որ այս կետը պետք է հաշվի առնվի և վերանայվի ատենախոսի կողմից, ինչը միայն էլ ավելի կարժևորի նրա կողմից ներկայացված աշխատանքը:

2. Աշխատանքի 22-րդ էջում հեղինակը ներկայացնում է 2011 թ-ին ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետազոտության տվյալների վերլուծությունը, որում առկա է «հաշմանդամության տեսակը» արտահայտությունը: Ակնհայտ է, որ ատենախոսը ուղղակիորեն հղում է կատարում տվյալ փաստաթղթին, որի վերձանումը բառացիորեն ներկայացնում է: Սակայն ՀՀ-ում «հաշմանդամության տեսակ» եզրույթը առհասարակ գոյություն չունի. կա հաշմանդամության խումբ /առաջին, երկրորդ, երրորդ/ և «հաշմանդամ երեխա» կարգավիճակ: Հաշմանդամության վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն հնարավոր է ստանալ ըստ երեխաների

կենսագործունեության սահմանափակման աստիճանների /առաջին, երկրորդ, երրորդ/ որոնք հետևյալն են. ինքնուրույն տեղաշարժվելու կարողություն, խաղալու կարողություն, ուսումնառության կարողություն, կողմնորոշման կարողություն, հաղորդակցվելու կարողություն, ինքնաապասարկման կարողություն, սեփական վարքագիծը հսկելու կարողություն: Այս ամենը մանրամասնորեն ներկայացված է ՀՀ կառավարության 13 հունիսի 2003 թ-ի N 780-Ն Բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները հաստատելու մասին որոշման մեջ: Մինևույն ժամանակ՝ առաջին գլուխը հիմնականում հանդիսանալով մասնագիտական գրականության ամփոփոփ վերլուծության հնարավորություն է տալիս ատենախոսին վերլուծել և մեկնաբանել նաև այդ սխալ եզրույթի կիրառումը՝ որևէ կերպ չխանգարելով նույն հետազոտության տվյալների ներկայացմանը, այլ ընդհակառակը՝ այն ավելի քննադատական ցույց կտա ատենախոսի մոտեցումը խնդրին:

3. Երկրորդ գլխի՝ 2.1 «Հետազոտության հինավորումը, խնդիրները, մեթոդները, կազմակերպումը և աշխատանքի փուլերը» ենթագլխում ատենախոսը երկրորդ պարբերությունը սկսում է հետևյալ կերպ՝ «Վերականգնողական և մանկավարժական աշխատանքի առաջատար փորձի ուսումնասիրումն ու վերլուծությունը ՀՀ ներառական կրթություն իրականացնող դպրոցներում թույլ են տալիս փաստել...», այստեղ հասկանալի չէ, թե կոնկրետ որ առաջատար փորձն է ուսումնասիրվել և ում կողմից կատարված հետազոտությունների հիման վրա: Չեն տրվում համապատասխան հղումներ: Նույն բացթողումը նկատվում է նաև նույն գլխի 2.2 ենթագլխում՝ «Ներկայիս կրթական բարեփոխումների շրջադարձային ժամանակաշրջանում, համաձայն կրթական ոլորտը կարգավորող միջազգային և տեղական իրավական ակտերի...»՝ հղումներ չկան, պարզ չէ թե ինչ կոնկրետ իրավական ակտերի մասին է խոսում ատենախոսը:

4. Երկրորդ գլխի՝ 2.2 ենթագլխում (էջ 52) ատենախոսը նշում է, որ ուսումնասիրությունները անց են կացվել կիրառելով տվյալների

հավաքագրման հետևյալ մեթոդները՝ «դասապրոցեսի դիտարկում», «հարցազրույցներ ուսուցիչների և ուսումնաօժանդակ անձնակազմի հետ», «ֆոկլուս խումբ քննարկումներ», «հարցաթերթիկային հարցումներ»: Մակայն հավելվածներում (Հավելված 7) ներկայացվում է միայն ներառական դպրոցի ուսուցիչներին, բազմամասնագիտական թիմի անդամներին և հատուկ կրթության ֆակուլտետի բարձր կուրսի և մագիստրատուրայի ուսանողներին ներկայացված հարցաթերթիկներ: Հավելվածներում առկա չէ դասապրոցեսի դիտարկման կառուցվածքային պլանը, ֆոկլուս խումբ քննարկման հարցադրումները, ինչպես նաև ուսուցիչների և ուսումնաօժանդակ անձնակազմի հետ իրականացված հարցազրույցների հարցաշարերը:

5. Կարծում ենք, որ աշխատանքը, միանշանակ, կհարստանար բանալի բառերի համապատասխան հղումներով սահմանումների առկայության դեպքում, օրինակ՝ ովքեր են ԿԱՊԿՈՒ երեխաները Հայաստանում, որոնք են «հաշմանդամություն ունեցող անձ» և «հաշմանդամ երեխա» սահմանումները ՀՀ-ում, ինչ է նշանակում վերականգնողական, շտկողական, ուսուցողական գործընթաց, աջակցող միջավայր, գնահատում, հարմարեցում, հասանելի կրթական միջավայր, մոդելավորում և այլն:

Ամբողջապես դրական գնահատելով Զարուհի Վարդանի Հարությունյանի «Էրգոթերապևտիկ միջամտության մոդելավորումը ներառական կրթություն իրականացնող դպրոցներում» թեմայով ատենախոսական աշխատանքը, ցանկանում ենք նշել, որ վերոնշյալ դիտողությունները բոլորովին չեն արժեզրկում ատենախոսի կողմից իրականացված գիտական աշխատանքը: Կարելի է պնդել, որ իրականացված է տեսական ամփոփում և գործնականում՝ բացառիկ էրգոթերապևտիկ միջամտություն, որը հնարավորություն է տվել լուծել շատ կարևոր գիտական խնդիր. մշակված են էրգոթերապևտիկ միջամտության համալիր մոտեցումների և կրթական կարիքի հաղթահարման յուրահատուկ միջոցներ և մեթոդներ:



Ատենախոսությունը շարադրված է գեղեցիկ գրական և մասնագիտական լեզվով, պահպանված է նյութի ներկայացման հաջորդականությունը, վարպետորեն մեկնաբանվում են ստացված արդյունքները՝ գրեթե զերծ է տեխնիկական վրիպումներից: Հեղինակը ցույց է տվել պատշաճ գիտական և մասնագիտական պատրաստվածություն:

Վերոնշվածը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրահանգումը.

Թեմայի արդիականությունը, նրա գիտական նորույթը, տեսական, գործնական և սոցիալական նշանակությունը, ինչպես նաև ստացված նյութերի հուսալիությունը և հիմնավորվածությունը, արդյունքներն ու եզրակացությունները հիմք են հանդիսանում Ջարուհի Վարդանի Հարությունյանի «Էրգոթերապևտիկ միջամտության մոդելավորումը ներատական կրթություն իրականացնող դպրոցներում» ատենախոսական աշխատանքը արդիական, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք, որը համապատասխանում է ՀՀ ԲՈՀ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» (Հատուկ մանկավարժություն) մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսը լիովին արժանի է գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդիմախոս՝

ՀՊՄՀ Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու՝

Մ. Ռ. Հարությունյան

Մ. Ռ. Հարությունյանի ստորագրությունը հաստատում էմ՝

ՀՊՄՀ գիտական քարտուղար, մ.գ.թ. դոցենտ՝

Մ. Ս. Իսախրյան

25 նոյեմբերի, 2019

